ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Մեսրոպ Մաշտոցից եւ Սահակ Պարթեւից յետոյ օրհներգութեամբ հիմնաւորապէս զբաղուել է նրանց կրտսեր աշակերտներից լաւագոյնը՝ Մովսէս Խորենացին։ Նա, մեր համոզմամբ, այդ ասպարէզում հանդէս է եկել 460-70ականներին, երբ հայոց կաթողիկոսն էր Գիւտ Արահեզացին (վախճ. 478)։ Վերջինս եւս Սահակ-Մեսրոպեան դպրոցի կրտսեր աշակերտներից էր, Խորենացու ուսումնակիցը («աշակերտակից Մովսէսի»), նաեւ գաղափարակիցը՝ իբրեւ յունամէտ ազգային գործիչ։ Արահեզացին իր ուսումնակցին ըստ ամենայնի հովանաւորել է, պաշտպանել ասորամէտ կղերականների յարձակումներից եւ իր կաթողիկոսութեան երկրորդ տարում արդէն (շուրջ 462ին) նրան ձեռնադրել է Բագրեւանդի եւ Արշարունիքի միացեալ թեմի առաջնորդ։

Վարդանանց պատերազմին յաջորդած խռովայոյզ տարիներին որոշակիօրէն խաթարուել էին Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի հաստատած կարգերն ու աւանդոյթները թէ՛ ժամակարգութեան եւ թէ՛ դաւանաբանութեան ու դպրութեան ասպարէզներում։ Ուստի եւ Արահեզացի Կաթողիկոսը վերականգնելու համար նախկին աւանդոյթները, գործի լծեց ժամանակի բոլոր կարող ուժերին։ Նա Յովհան Մանդակունի եպիսկոպոսի (յետագայում՝ կաթողիկոս) հետ բարեկարգեց Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի ստեղծած Ժամագիրքը։ Նրա յանձնարարութեամբ Դաւիթ Անյաղթը գրեց իր նշանաւոր Նէրբողեանը՝ ընդդէմ նեստորականութեան եւ ի պաշտպանութիւն ուղղափառ դաւանանքի (միաբնակութեան)։ Եւ, չենք կասկածում, որ Արահեզացին է յորդորել Խորենացուն գրել օրհներգեր՝ շարունակելու եւ ամբողջացնելու համար այդ ասպարէզում մեծ ուսուցչապետերի սկսած եւ կիսատ թողած գործը, այն է՝ հայկական Մաշտոցի հետեւութեամբ ու համանմանութեամբ ստեղծել ազգային կցուրդ-օրհներգերի ծիսարանը՝ Կցուրդարանը։

Մինչեւ Խորենացուն անցնելը անհրաժեշտ ենք համարում նշել, որ Արահեզացին ինքը իր բարեկարգած Ժամագիրքում սահմանել է Արեւագալի կանոնը[1]։ Ըստ մեր վարկածի, Արեւագալի կանոնում առկայ են եղել Արահեզացու հեղինակած չորս երգեր, որոնցից երկուսը յետագայում Ներսէս Շնորհալին փոխարինել է իր յօրինած երգերով՝ պահպանելով Արահեզացու երկու հեղինակութիւնները[2]։ Այդ երգերը Ժամագիրքից մուտք են գործել Շարակնոց (պահպանուելով նաեւ Ժամագիրքում)։ Արահեզացին է հեղինակել առաջին եւ չորրորդ երգերը («Յարեւելից մինչ ի մուտս» եւ «Ճանապարհ եւ ճշմարտութիւն»), որոնք հին կցուրդ-երգերի նմուշներ են։

Օրհներգութեան ասպարէզում, մեծ ուսուցչապետերից յետոյ, յաջորդ խոշոր հեղինակը Խորենացին է։ Շարակնոցներում նա յիշատակուած է նա-

եւ Մովսէս Քերթող անունով։ Քերթող բառն իր բուն իմաստով նշանակում է «կերտող ոտանաւոր եւ չափաբերական բանից. տաղաչափ. բանաստեղծ. պուէտ. է սեպհականեալ անուն Հոմերոսի առ յոյնս, եւ առ մեզ՝ Մովսէսի Խորենացւոյ»[3]։

Խորենացին հայ գիտակցութեան մէջ աւելի շատ (եթէ ոչ՝ բացառապէս) դրոշմուած է իբրեւ պատմագիր։ Եւ դա բնական է, քանի որ նա յիրաւի հայ խոշորագոյն պատմիչն է, Պատմահայրը։ Սակայն մինչեւ պատմագրութեամբ զբաղուելը նա եղել է քերթող-բանաստեղծ-երգահան եւ թողել է չափազանց հարուստ բանաստեղծական ժառանգութիւն։ Այս է պատճառը, որ նա կոչուել է նաեւ Քերթողահայր, որ նշանակում է «հայր եւ գլուխ քերթողաց»[4]։ *Դեռեւս Հայր Ղեւոնդ Ալիշանն է նկատել, որ Խորենացին Քերթողահայր է կոչուել* «աւելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար. եւ թէ այս մտքով այս անուանս արժանաւոր է»[5]։

Սահակ-Մեսրոպեան դպրոցում ուսումնառելիս Խորենացին խորացել է նաեւ երգեցողութեան մէջ։ Այնուհետեւ «Ալեքսանդրիայում եւս ըստ ամենայնի կարեւորել է պաշտօներգութեան եւ նոյնիսկ աւելի լայն՝ ընդհանրապէս երգ-երաժշտութեան, հին ու նոր երգերի յարաբերութեան, ազգային լեզուներին կապուած հոգեւոր երաժշտութեան եւ այլ կենսական երեւոյթների հետ առնչուող հիմնական հարցերը»[6]։ *Ահա թէ ինչու, պատահական չէ, որ ժամանակի կաթողիկոսը յատկապէս նրան է յանձնարարել շարունակելու ուսուցչապետերի գործը օրհներգութեան ասպարէզում։*

Խորենացին, ըստ իրեն յանձնարարուած ծրագրի, յօրինել է Մեծ Պահքին նախորդող եւ Աւագ Շաբաթին յաջորդող գրեթէ բոլոր նշանակալից եկեղեցական տօներին վերաբերող օրհներգերը։

Նա է հեղինակել Քրիստոսի Ծնունդին եւ Յայտնութեանը, ինչպէս նաեւ այդ մեծ տօնին առնչուող Ճրագալուցին եւ Տեառնընդառաջին նուիրուած երգերը։ Այդ են վկայում շարականների հեղինակների ցանկերը. «Սուրբն Մովսէս Քերթող՝ զՃրագալուցի... զկարգ Ծննդեանն... զՏեառնընդառաջին»[7]։

Շարականների հեղինակներին քաջածանօթ գրիչները եւս Ծննդեան օրհներգերի հեղինակին «կոչում են Մովսէս Քերթող կամ Մովսէս Խորենացի, Քերթողն ու Խորենացին միեւնոյն անձն համարելով», *ինչպէս օրինակ,* «զԾննդեանն՝ Մովսէս Քերթողն ասաց», «Մովսէս Քերթողն՝ զԾննդեանն»[8]։

ԺԳ. դարի մատենագիր Վարդան Արեւելցին Ծննդեան օրհներգերը վերագրել է թէ՛ Խորենացուն եւ թէ՛ Է. դարի երաժիշտ-տեսաբան Բարսեղ Ճոնին. «Զի թէ՛ մեր թարգմանիչն եւ հոգեշարժ վարդապետ Մովսէս Խորենացին ասացեալ է զԾննդեան եւ զՅարութեան երգս շարականաց, եւ թէ՛ մեծն եւ հանդիսաւոր Ճգնաւորն Բարսեղ, մականուամբ Ճոնն կոչեցեալ»[9]։

Մեր համոզմամբ, Ծննդեան օրհներգերի հիմնական մասը հեղինակել է Խորենացին, իսկ Բարսեղ Ճոնը (թերեւս նաեւ այլ հեղինակներ) ընդամէնը կատարել է որոշ յաւելումներ[10]։ *Սրանով են բացատրւում Ծննդեան օրհներգերում առկայ որոշ լեզուաոճական եւ կառուցուածքային չեղումները։*

Շարականների հեղինակային խնդրով լրջօրէն զբաղուած երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանի եզրայանգմամբ, Խորենացուն են պատկանում «Աստուածայայտնութեան Ճրագալուցի, Տեառնընդառաջի... կանոնների բոլոր երգերը... Ծննդեան ութ օրերի կանոնների երգերի ստուար բազմութիւնը» (*ընդգծումներն իմն են - Հ.Բ.*)[11]։

Խորենացին, որ հեղինակել է Սուրբ Ծնունդի եւ յարակից Ճրագալուցի եւ Տեառնընդառաջի կարգերը, պիտի անհրաժեշտաբար անդրադարձած լինէր նաեւ Աստուածածնի Աւետմանը։ Եւ այդպէս էլ եղել է։ Ինչպէս ապացուցել է Հայր Սահակ Ամատունին, Քերթողահայրը ստեղծել է նաեւ Աւետման (Աւետեաց) նախնական կարգը։ Այստեղ նա ընդգրկել է չորս երգեր՝ մէկական Հարցն, Մեծացուսցէ, Ողորմեա եւ Տէր Յերկնից։ Ամատունին հիմք է ունեցել ԺԷ. դարի սկզբի մի ձեռագիր Շարակնոց, որտեղ առկայ է եղել այդ հին կարգը, եւ որի գրիչը վկայել է. «ԶԱւետեաց Պատկերն եւս Մովսէս Խորենացին է ասացեալ»[12]։ *Այնուհետեւ (ԺԲ. դարում) Գրիգոր Փոքր Վկայասէրը ստեղծել է Աւետման նոր կանոն (պատկեր)՝ վերացնելով նախկինը*[13]։ *Ըստ այդմ, Խորենացու հեղինակած Հարցնը դարձել է պարականոն, իսկ յաջորդ երեք երգերն ընդգրկուել են Յարութեան Մեծացուսցէների շարքում։*

Կասկած չկայ, որ Քերթողահայրն անհրաժեշտաբար պիտի անդրադառնար քրիստոնէական մեծագոյն տօնին՝ Յարութեանը։ Յիրաւի, ըստ շարականոցային ցանկերի եւ այլ տուեալների, նա հեղինակել է ութ շարք կազմող Յարութեան Հարցները. «Սուրբն Մովսէս Քերթող... զՅարութեան Հարցսն»[14]։

Տեսանք, որ Վարդան Վարդապետը ինչպէս Ծննդեան, այնպէս էլ Յարութեան երգերը վերագրել է թէ՛ Խորենացուն, թէ՛ Բարսեղ Ճոնին։ Յարութեան Հարցները վերագրուել են նաեւ Անանիա Շիրակացուն[15]։ *Սակայն այս անգամ էլ պիտի ընդունել, որ է. դարի այդ երկու հեղինակները Յարութեան Հարցներում թերեւս կատարել են միայն որոշ յաւելումներ։ Յաւելողների մէջ, անշուշտ, եղել են նաեւ այլ հեղինակներ*[16]։ *Բարսեղ Ճոնին, Շիրակացուն եւ այլ հեղինակների սոսկ յաւելող ենք համարում, քանի որ խնդրի քննութիւնը մեզ բերել է այն համոզման, որ Յարութեան Հարցների հիմնական հեղինակը Քերթողահայրն է։*

Հիմնականում Խորենացին է հեղինակել նաեւ վերոյիշեալ Յարութեան Մեծացուսցէները. «Սուրբն Մովսէս Քերթող՝... զՄեծացուսցէքն»[17]։

Այստեղ հարկ է նշել, որ մի փոքր աւելի ուշ Ստեփանոս Սիւնեցին (Առաջինը) ստեղծել է Յարութեան Օրհնութիւնները, իսկ Յովհան Մանդակունին՝ Ճաշու երգերը (Գովեաներ)։ Ըստ այսմ, Ոսկեդարում արդէն կազմուել է Յարութեան ամբողջական կարգը (Օրհնութիւններ, Հարցներ՝ իրենց կազմով, Մեծացուսցէներ եւ Ճաշուներ)։ Դա իր ծաւալով խոշորագոյն օրհներգային կարգն է, ինչը միանգամայն բնական է՝ նկատի ունենալով այդ մեծագոյն տօնի խորհուրդը։ Սակայն ԺԲ. դարում (ինչպէս Աւետման կարգի պարագայում) ստեղծուել է Յարութեան մի նոր, առանձին կարգ («Կանոն Սրբոյ Զատկին». հեղինակ՝ Ներսէս Լամբրոնացի), եւ նախ-

նական կարգի չորս մասերը յայտնուել են Շարակնոցի տարբեր հատուածներում։

Ըստ որոշ վկայութիւնների, Խորենացին է հեղինակել նաեւ Հոգեգալստեան (Պենտեկոստէ), Վարդավառի եւ Աստուածածնի Վերափոխման առաջին օրերի կարգերը[18]. «Սուրբն Մովսէս Քերթող՝... եւ զառաջին պատկերն Հոգւոյ գալստեան, զՎարդավառի եւ զՎերափոխման»[19]։ «Կանոնն Պենտէկոստէին Առաջին աւուրն... ասացեալ Մովսէսի Քերթող վեհին»: «Մովսէս Քերթողն՝... զՎարդավառին»: «Փոխման Աստուածածնին ասացեալ Մովսէսի Քերթող Խորենացի»[20]։ *Այդ կարգերը վերագրուել են նաեւ Յովհան Մանդակունուն եւ Անանիա Շիրակացուն*[21]։ *Այս անգամ էլ ուսումնասիրութիւնը մեզ բերել է այն կարծիքին, որ այդ կարգերի հիմնական հեղինակը եւս Խորենացին է։ Ի դէպ, Քերթողահայրը գրել է նաեւ Մարիամ Աստուածածնի Վերափոխմանը եւ Վարդավառի խորհուրդին նուիրուած այլ երկեր*[22]։

Շարակնոցային ցանկերում Խորենացուն եւ Շիրակացուն են վերագրուած Յովհաննէս Մկրտչին («զՅոհաննուն») նուիրուած օրհներգերը։ Հայր Գաբրիէլ Աւետիքեանը որոշ տուեալների հիման վրայ Յովհաննէս Մկրտչի գլխատման կարգը համարել է «արարեալ ի Մովսիսէ Խորենացւոյ»[23]։

Շարակնոցային ցանկերը Խորենացուն եւ Շիրակացուն են վերագրել նաեւ Անտոն Անապատականին, Թէոդոս Թագաւորին (Սուրբ Թագաւորաց) եւ Գրիգոր Լուսաւորչին նուիրուած կարգերը[24]։ *Աւետիքեանի ունեցած տուեալներով այդ կարգերը վերագրւում են հիմնականում Խորենացուն, մասամբ՝ Յովհան Մանդակունուն*[25]։

Համամիտ ենք Թահմիզեանին, թէ Խորենացին է գրել «Անտոն Անապատականին նուիրուած կանոնի կտորները (բացի Օրհնութեան Բ պատկերից՝ «Որ ի հանդէս քո ճգնութեան»), Թագաւորաց կանոնի կտորները (բացի Օրհնութիւնից՝ «Որ զերկնաւոր թագաւորութեանդ») եւ Գրիգոր Լուսաւորչին նուիրուած կանոնի հին երգերը («Ով երջանիկ տէր»)»[26]։

Խորենացին ըստ էութեան իրագործել է իր մեծ ծրագիրը՝ շարունակելով եւ գրեթէ լիովին ամբողջացնելով իր ուսուցչապետերի սկսած գործը։ Նա ստեղծել է ժամանակի հայ եկեղեցու սահմանած նշանակալից տօներին նուիրուած օրհներգերի կարգերը։ Դրանք, անշուշտ, յետագայում համալրուել են այլ հեղինակների երգերով, որոշ օրհներգեր պարականոն են դարձել։ Խորենացու ստեղծած կարգերն ընդգրկում են շուրջ 300 *երգեր, որոնց մեծ մասի հեղինակն է նա։*

Թէ ճշգրտօրէն ո՛ր թուականին է սկսել եւ ե՛րբ է աւարտել Խորենացին իր մեծաթիւ օրհներգերի յօրինման աշխատանքը, չենք կարող ասել։ Դա եղել է 460*ականների սկզբից մինչեւ* 470*ականների կէսերն ընկած ժամանակամիջոցին։*

Դրանից յետոյ (թերեւս նաեւ զուգահեռաբար) նա շարադրել է իր Պատմութիւնը, որն աւարտել է շուրջ 480*ին։ Ինչպէս գրում է Թահմիզեանը, Խորենացու երգերի* «բազմակողմանի հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ

դրանք մեր Քերթողահօր երաժշտա-բանաստեղծական արուեստի յեղաշրջման նոյնիսկ բազմամեայ մի ճանապարհ են գծում»[27]։

Իր հեղինակած օրհներգերը Խորենացին, անշուշտ, յանձնել է կաթողիկոսարան՝ պատուիրատու Գիւտ Արահեզացուն[28] կամ նրան յաջորդած Յովհան Մանդակունուն։

*

Քրիստոսի Ծնունդին ձօնուած օրհներգերը ստեղծելիս Խորենացին, բնականաբար, հիմք է ընդունել Աւետարանը։ Նա հարկ է համարել նախ անդրադառնալ Աստուածածնի Աւետմանը, որը հայ առաքելական եկեղեցին տօնում է Քրիստոսի Ծնունդից ինը ամիս առաջ՝ Ապրիլի 7ին։ Այդ օրն է, երբ, ըստ Աւետարանի, Գաբրիէլ հրեշտակապետը գալիս է Գալիլիայի Նազարէթ քաղաքը եւ Դաւթի սերնդից Յովսէփի նշանածին՝ կոյս Մարիամին, աւետում նրա՝ Սուրբ Հոգուց յղիանալու եւ Աստուածորդուն ծնելու մասին (Շուկա, Ա., 26-28)։

Աւետման (Աւետեաց) տօնի առթիւ Խորենացին, ինչպէս նշեցինք, կազմել է մի ոչ-ծաւալուն կարգ, որի Հարցնը սկսւում է հրեշտակապետի՝ Մարիամին ուղղուած աւետիսով։

Այստեղ անհրաժեշտ է նշել մի կարեւոր հանգամանք։ Մարիամն իբրեւ Աստուածամայր եւ Սրբուհի պաշտօնապէս ճանաչուել է 431ի Եփեսոսի Երրորդ Ժողովում. դրանից յետոյ է հայ իրականութեան մէջ տարածուել նրա պաշտամունքը, եւ հայ առաքելական եկեղեցական ծիսակարգի մէջ մտել են Աստուածածնին նուիրուած տօները։ Ուստի եւ զարմանալի չէ, որ Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը, որոնք օրհներգեր են հեղինակել նախքան Մարիամի պաշտամունքի տարածումը Հայաստանում, չեն անդրադարձել Աստուածամօրը՝ որպէս տօնելի եւ պաշտելի Սրբուհու[29]։

Խորենացին առաջինն է հայոց մէջ օրհներգել Սուրբ Կոյսին՝ սկզբնաւորելով հայ մարիամերգութիւնը։

Ասենք նաեւ, որ իր Պատմութիւն Հայոցի մէջ Խորենացին առանձնակի անդրադարձել է Եփեսոսի Ժողովին՝ դատապարտուած ընդդէմ «ամբարիշտն» *Նեստորի։ Պատմիչը նշել է, որ այդ ժողովին չեն մասնակցել Մեսրոպ Մաշտոցը եւ Սահակ Պարթեւը, որոնց յատուկ առաքուել են ժողովի սահմանած կանոնները[30]։*

Այն ժամանակ, երբ Խորենացին յօրինում էր իր օրհներգերը, նեստորականութիւնը լայնօրէն թափանցել էր Հայաստան՝ մերժելով Մարիամի՝ Աստուածածին եւ խաչի՝ աստուածային լինելը։ Ի հակազդեցութիւն այդ հերձուածողական քարոզների՝ Խորենացին իր օրհներգերում չափազանց շատ փառաբանել ու ներբողել է թէ՛ Աստուածածնին եւ թէ՛ Միածին Քրիստոսի Սուրբ Խաչը (այստեղ, անշուշտ, որոշակի դեր է ունեցել նրա հովանաւոր Գիւտ Արահեզացին)։

Ինչպէս իր օրհներգերում, այնպէս էլ իր Պատմութիւն Հայոցի մէջ Խորենացին, Եփեսոսի Ժողովի ոգով, Աստուածածնին կոչել է «Ամենասուրբ»[31]։

Նշեցինք, որ Խորենացին հեղինակել է նաեւ Աստուածածնի Վերափոխմանն առնչուող մի երկ։ Դա Սահակ Արծրունուն գրած նրա Թուղթն է[32], *որտեղ պատմւում է, թէ ինչպէս փայտի վրայ դրոշմուած Սուրբ Կոյսի պատկերը նրա վերափոխումից յետոյ բերուեց Հայաստան։ Այստեղ էլ Ամենասուրբ Մարիամին Խորենացին կոչել է* «Ամենօրհնեալ Սրբուհի», *այլեւ* «Սուրբ անարատ Կոյս»[33]։

Սակայն վերադառնանք Խորենացու օրհներգերին, աւելի որոշակի՝ Աւետման կարգին։ Այստեղ պարականոն դարձած Հարցնին յաջորդել է մի Մեծացուսցէ։ Հայ օրհներգութեան մէջ այս երգատեսակը սկզբնապէս կցորդուել է Աստուածածնի «Մեծացուսցէ անձն իմ զՏէր» *աւետարանական օրհնութեանը (Շուկա, Ա., 46), որն ընդգրկուել է հայկական Սաղմոսարանում։ Մեծացուսցէները հիմնականում նուիրուած են Տիրամօրը։ Ըստ այսմ, Աւետման նախնական կարգի Մեծացուսցէն, ըստ երեւոյթին, այդ երգատեսակի առաջին նմուշն է։*

Նշեցինք նաեւ, որ Խորենացին հեղինակել է Մեծացուսցէների մի ամբողջ շարք՝ գրուած Տիրոջ Յարութեան առթիւ։ Նա բազմաթիւ Մեծացուսցէներ եւ Տիրամօրը ձօնուած այլ տեսակի օրհներգեր է յօրինել նաեւ իր հեղինակած միւս կարգերի, յատկապէս Աստուածածնի կարգերի համար։ Այդ օրհներգերում Ամենասուրբը եւ Ամենօրհնեալ Աստուածամայրը ներկայացուած է զանազան ներբողական-փառաբանական մակդիրներով։ Օրհներգուն նրա մէջ նախ առանձնացրել է երեք խորհուրդներ.

Երիս խորհուրդս սոսկալի ի Քեզ տեսանի, Աստուածածի՜ն,
յոյսի՛ն անսերմնական, ծընո՛ւնդ անարատ,
կուսութի՛ւն՝ յետ ծընընդեան մնալով անապական...(էջ 72-73)[34]։

Ըստ այսմ, մակդիրների ու փոխաբերութիւնների մի մասը մատնանշում է Սուրբ Կոյսի անարատութիւնը՝ բնորոշելով նրան իբրեւ «Կուսութեանց պարծանք», «Անխախտելի Կուսութիւն», «Անհարսնացեալ», «Հարսն երկնաւոր», «Հարսն անփորձ», «Գանձ անապական», «Մաքուր Աղաւնի»...

Անապական Կոյսը կանանց մէջ միակ օրհնեալն է, բոլորի համար երանելի, «Պարծանք՝ ազգի մարդկան», «Պարծանք եկեղեցւոյ»։ *Նրան օրհնում, գոհաբանում եւ փառաւորում են ոչ միայն մարդիկ, այլեւ* «վերին զօրութիւնք, դասք անմարմնոց, հոգեղինաց, հրեղինաց, զուարթնոց եւ հրեշտակաց»։ *Նա ինքը հողեղէն սերովբէ է,* «ահեղիցն նմանեալ հրեղինաց դասուցն», «քան զերկինս բարձրագոյն», «գերահրաշ Ծաղիկ՝ բուրեալ յեղեմայ հոտ անմահութեան», «խորհուրդ կենաց», «Մայր կենդանութեան», «ճանապարհ արքայութեան»։

Այս հողեղէն կինը սրբացուել ու գերբնական արարածի յատկանիշներ է ձեռք բերել, քանի որ նրան է շնորհուել կրելու մեծագոյն խորհուրդը՝ Աստծոյ մարդեղացումը։ Հրեշտակապետը նրան կոչել է Բերկրեալ (շնորհընկալ), քանի որ նրա մէջ է Սուրբ Հոգու միջոցով մարմնաւորուել Տէրը։ Ուստի եւ Տիրամօրը տրուած մակդիրների ու փոխաբերութիւնների մեծ մասը խորհրդանշում է նրա այդ մեծ առաքելութիւնը՝ լինել մարդեղացած

Աստծոյ կրողը եւ ծնողը. «կենարար Բանի Բնակարան», «Բնակ հրեղէն Աստուածութեան», «քերովբէական Աթոռ», «Վերընկալ աստուածային Բանի», «Հիմն եկեղեցւոյ», «Աստուծոյ լուսեղէն Տաճար», «Խորան Հոգւոյն Սրբոյ», «Տեղի անտանելի Լուսոյն», «Հրափայլ ծագման Առագաստ», «Աղբիւր անսպառ Լուսոյն», «ճշմարիտ Արեւելք Արեգականն արդարութեան»[35]։

Լինելով Լոյս-Աստծուն կրողն ու ծագեցնողը՝ Տիրամայրն ինքը եւս լուսեղէն էակ է՝ «քան զարեգակն պայծառագոյն», «պայծառ Երկինք», «Ամպ լուսեղէն», «որպէս գերարփի փայլեալ»։

Տիրամայրն ամէնից աւելի գովերգուած է վսեմ տաճարի փոխաբերութեամբ, որ անարատ է, անխախտելի, լուսեղէն։ Երգերից մէկում դիմելով Բան Աստծոյ Տաճար-Մարիամին՝ բանաստեղծն ասել է.

Խորանայարկ, կամարանման յօրինեցար, Սուրբ Կոյս
Աստուածածի՜ն,
զանհասանելի ըզԲանն Աստուած բնաւորապէս, անսերմնաբար
կրեցեր ի Քո որովայնի.
անդադար երգով ըզՔեզ միշտ մեծացուցանեմք (էջ 528-529)։

Ինչպէս Քրիստոսն իր մահով փրկեց մարդկութիւնը նախահայր Ադամին տրուած Աստծոյ անէծքից, նոյնպէս եւ Մարիամն իր Աստուածածնութեամբ վերացրեց նախամայր Եւայի մեղքը, դարձաւ «Բարձող անիծից» եւ «Լուծիչ երկանց» (*երկունքի ցաւերը ջնջող*)։ *Դիմելով նրան՝ օրհներգուն ասել է.*

Քեւ լուծան կնիք դատապարտութեան,
եւ Քեւ կագնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ... (էջ 47)։

Այսպիսով, Քրիստոսի մայրը ձեռք է բերել նաեւ որոշ աստուածայինսրբային յատկանիշներ՝ դառնալով «Քաւիչ մեղաց», «Բաշխող բարութեանց», «Բոլորից փրկութեան Մայր», «Օգնական եւ Շնորհի աշխարհի», «Աղբիւր ծարաւեաց», «Հանգիստ աշխատելոց»... *Նա այդպիսին է, անշուշտ, Տիրո՛ջ կամքով, ուստի եւ հաւատացեալի կողմից առաւելապէս ընկալուել ու ընորոշուել է իբրեւ Աստծոյ առաջ բարեխօսող,* «Միջնորդ օրինաց եւ շնորհաց», «Բարեխօս աշխարհի»...

Խորենացու օրհներգերում Աստուածածինը գովերգուած է նաեւ Հին Կտակարանից մակաբերուած մի շարք խորհրդանշական փոխաբերութիւններով. «երկնային Դուռ», *որով կարող է անցնել միայն Աստուած*, «անկէզ Մորենի, Լոյսի սիւն, վիմածին Լեռ, փակուած Աղբիւր, Գեղմ, հովանի Ամպ»... *Այս խորհրդանիշները պարզաբանւում են մարգարէական գրքերի մեկնութիւններով, որոնց քաջածանօթ է եղել Խորենացին։*

Այսպիսով, Խորենացու օրհներգերում ներկայացուած է Աստուածածնի առինքնող լուսեղէն կերպարը։ Դրա շնորհիւ նրա սկզբնաւորած մարիամերգութիւնը մեծ խիզախում ու նորարարութիւն էր եւ վաղ միջնադարի լուսերգութեան բանաստեղծական փայլուն դրսեւորում։ Պիտի անցնէր կէս հազարամեակ, որպէսզի սրբացուած-աստուածացուած Մարիամը Գրիգոր Նարեկացու քերթութեան մէջ վերստին դառնար հողեղէն կին, կանացի

գեղեցկութեամբ երկրային արարած, որի աչքերն են «ծով ծիծաղախիտ... բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր... Ծոցն լուսափայլ՝ կարմիր վարդով լցեալ»...[36]

*

Հայ առաքելական եկեղեցին Աստուածայայտնութեան Ճրագալուցը նշում է Յունուարի 5ին, Սուրբ Ծնունդի նախօրեակին։ Այդ ծիսակատարութիւնը «առ հինսն կատարիւր մօտ ի մութն երեկոյին լուցմամբ ճրագաց»[37]։ *Այս հանդիսութեան համար Խորենացին հարկ է համարել ստեղծել առանձին երգաշարք, որն անմիջապէս շարունակում է Աւետման երգաշարքը եւ վերջինիս հետ միասին նախերգանքի դեր կատարում բուն Աստուածայայտնութեանը նուիրուած օրհներգութեան համար։*

Ճրագալուցի կարգը եւս արծարծում է Աստուածածնի Աւետման եւ Քրիստոսի մարդեղացման թեման։ Հետեւաբար այստեղ գերակշռում է Աստուածամօր եւ նրա մէջ մարմնացած Աստծոյ փառաբանութիւնը, որ ողողուած է ծագող արդար Արեգակի ոգեղէն լոյսով.

Ծագումըն հրաշալի, որ անյայտ էր ի մէնջ,
եւ Բանըն Հայրական՝ անըմբըռնելի,
հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ՝
անվընաս պահելով զարարածս ամենայն (*էջ* 24)։

Խորենացին ութ կարգերով օրհներգել է մարդեղացած Քրիստոսի Ծնունդը՝ բանաստեղծօրէն մշակելով համապատասխան աւետարանական նիւթը։ Յիսուսը ծնւում է Բեթղեհէմում, եւ նրան խանձարուրով բարուրած դնում են մսուրի մէջ։ Նրան առաջինը տեսնում եւ երկրպագում են հովիւները։ Ապա ուղեցոյց աստղին հետեւելով՝ գալիս են մոգերը եւ երկրպագում նրան։

Նշանաւոր է եւ ժողովրդի մէջ լայնօրէն տարածուած է Ծննդեան Առաջին օրուայ Օրհնութիւնը, «որ երգւում է ոչ միայն եկեղեցում, այլեւ տներում, հանդէսներում եւ մանաւանդ Ծննդեան Աւետիսների ժամանակ։ Այս շարականի մասսայականացման ու շատ սիրուելու գաղտնիքը պարզութեան, գեղեցկութեան ու մատչելիութեան մէջ է»[38]։ *Ահա առաջին երկտող տունը.*

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ,
հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի (*էջ* 27)։

Արծարծուող նիւթին զուգընթաց դարձեալ շօշափւում է Աստուածածնի Աւետման թեման, եւ կատարւում է վերջինիս ու նրա մարմնացեալ Որդու փառաբանութիւնը, ինչպէս՝

Ի Հօրէ ծագեցար՝ լուսաւորել զարարածըս,
արդարութեա՜ն Արեգակըն, Տէ՜ր, փա՛ռք Քեզ։

Ծընար ի յայրին, ընծայեցաւ Բեթղեհէմ,
արդարութեա՜ն Արեգակըն, Տէ՜ր, փա՛ռք Քեզ։

Հովուաց յայտնեցար, Երկրըպագեա՜լդ ի մոգուց,

արդարութեա՜ն Արեգակըն, Տէ՜ր, փա՛ռք Քեզ:

Եւ մե՛ք երգեսցուք, որ ի Կուսէն մարմնացար,
արդարութեա՜ն Արեգակըն, Տէ՜ր, փա՛ռք Քեզ (*էջ* 28)։

Աստուածայայտնութեան հետ միաժամանակ հայ առաքելական Եկեղեցին տօնում է նաեւ Քրիստոսի մկրտութիւնը (Ջրօրհնէք)։ Յովհաննէս Մկրտչի ձեռքով երեսնամեայ Քրիստոսը մկրտւում է Յորդանան գետում. «եւ ահա բացան նմա երկինք, եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ» (*Մատթէոս*, **Գ**, 16)։ ***Այս իրողութեանը Խորենացին անդրադառնում է Աստուածայայտնութեան կարգերում։ Նրա բնորոշմամբ, Քրիստոսը մկրտուելով Յորդանանում,*** «լուաց ըզմեղ աշխարհի», «սրբեաց զՅորդանան».

Մըկըրտի Քրիստոս, եւ սըրբին ամենայն արարածք,
եւ տայ մեզ թողութիւն մեղաց՝
ջրով եւ Հոգւով վերասըրբելով ըզմեզ (*էջ* 59)։

Յովհաննէս Մկրտիչը՝

Տեսանելով Սուրբ զՀոգին՝ աղաւնակերպ ի վերայ ջուրցըն,
աղաղակէր՝ ասելով. «Ահա Գառն Աստուծոյ, որ ի Հօրէ
վըկայեցաւ.
– Դա է Որդի իմ սիրելի, ընդ որում Ես հաճեցայ» (*էջ* 63)։

Աստուածայայտնութեան կարգերում առկայ են օրհներգերի բոլոր տեսակները, ինչի շնորհիւ «կոտրուել է» յարասուող պատումի միակերպութիւնը։ Ընդհանուր առմամբ, այդ կարգերում տիրապետում է զուարթ լոյսով ողողուած աւետիսեան-ցնծագին տրամադրութիւնը, քանզի ծննդեան եւ կնունքի տօն է, այն էլ՝ Լոյս-Աստծոյ Ծնունդի եւ Մկրտութեան.

Ցընծութեամբ տօնեսցուք ըզԾընունդ Քո Սուրբ,
որ յայտնեցար մեզ՝ Լոյս ի Լուսոյ
եւ լուսով Քո լըցեր զտիեզերըս,
ըզՔեզ օրհնեմք, Աստուա՜ծ հարցըն մերոց... (*էջ* 28)։

Մըկըրտեալ ի Յորդանան ի Յովհանէ,
աստուածային բնութեամբ, մարմնովըն, զոր ի մէնջն էառ՝
ըզմեզ լուսաւորելով աստուածային ծագմամբըն (*էջ* 61-62)։

Եթէ Աւետման եւ Ճրագալուցի երգերը համարում ենք Աստուածայայտնութեան ութ օրերի օրհներգութեան նախերգանքները, ապա վերջերգ կարող ենք համարել Տեառնընդառաջի կարգը։ Ըստ Աւետարանի, քառասնօրեայ Յիսուսին, «ըստ օրինացն Մովսիսի», ***տանում են Երուսաղէմի տաճար՝*** «յանդիման առնել Տեառն»։ ***Այստեղից էլ՝ հայ առաքելական եկեղեցում Փետրուարի*** 14***ին նշուող Տեառնընդառաջ տօնի անուանումը։ Տաճարում մանուկ Յիսուսին իր գիրկն է առնում Սիմէոն ծերունին՝ մարգարէանալով, որ մանուկը կը լինի*** «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց եւ փառս ժողովրդեան Իսրայէլի» (*Ղուկաս*, **Բ**, 22-32)։

Այս է Խորենացու հեղինակած Տեառնընդառաջի կարգի նիւթը, որի շարադրանքը երբեմն վերածուել է բանաստեղծական գեղեցիկ տողերի, ինչպէս՝

Այսօր երկիրս երկինք անուանեցաւ,
զի Տէրն տէրանց իջեալ յերկնից ի յերկիր
եւ ընծայիլ յանձն առնու ի գործոց ձեռաց Իւրոց (էջ 77)։

Տեառնընդառաջի օրհներգերում գծագրուած է Սիմէոն ծերունու կենդանի մարդկային կերպարը։ Նա, որին Սուրբ Հոգուց հրամայուած էր մահ չտեսնել, մինչեւ չտեսնի Տիրոջ Օծեալին, այժմ վերջապէս հասել է իր բաղձալի նպատակին եւ կարող է հանգիստ մեռնել։ Նա գգւում է մանկանը՝ փառաւորելով Աստծուն։ «Խայտար ալէօքն ծերունին», *որին օրհներգուն կոչում է քերովբէական աթոռ (ինչպէս կոչել է Աստուածածնին), քանի որ նրա գրկում է բազմել մարմնացած Աստուածորդին։*

Այսպիսով, Աստուածայայտնութեան երգերում պաշտուող սրբութեանը զուգընթաց պատկերւում է նաեւ մարդ արարածը. մի դէպքում՝ ի դէմս Կոյս Մարիամի, մէկ այլ դէպքում՝ Սիմէոն ծերունու։ Միւսը ինքը՝ օրհներգուն է, իր յոյզերով ու խոհերով, որ օրհներգում է՝ յաճախ հանդէս գալով պաշտող համայնքի կողմից, երբեմն նաեւ իր իսկ անձով.

Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց...
փրկել ըզմեզ ի փորձութենէ... (էջ 23)

Այսօր ըզմեղօք դատապարտեալ անձն իմ ի մահ
նորոգեա՛ ի կեանսդ յաւիտենից մարդասիրապէս... (էջ 38)

Այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ եւ զիս՝
ըզբազմամեղս,
ի կապանաց մահու՝ ի կեանսդ յաւիտենից (էջ 76)։

Օրհներգուի անձի, որպէս «քնարական հերոսի» նման դրսեւորումներն արդէն առկայ են Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի օրհներգերում։

*

Նշեցինք, որ Խորենացին օրհներգեր է յօրինել նաեւ քրիստոնէական մեծագոյն տօնի՝ Յարութեան կամ Սուրբ Զատկի առթիւ՝ ստեղծելով ութ շարքերից բաղկացած Հարցներ եւ առանձին շարք կազմող Մեծացուսցէներ։

Յարութեան Հարցները Խորենացին սկսել է այն աւետարանական դրուագներից, որոնցով աւարտւում են Սահակ Պարթեւի հեղինակած Աւագ Շաբաթի կարգերը։ Նկատի ունենք Քրիստոսի խաչելութեան, մահուան եւ թաղման դրուագները։ Այնուհետեւ օրհներգուն արծարծել է հիմնական թեման՝ Քրիստոսի Յարութիւնը։

Քրիստոսի թաղման յաջորդ օրն առաւօտ կանուխ Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը եւ Սողոմէն գնում են անուշաբոյր իւղերով ու խնկով օծելու Աստուածորդու մարմինը։ Սակայն ժայռափոր գերեզմանը թափուր են գտնում, եւ հրեշտակն աւետում է նրանց Քրիստոսի

Յարութիւնը։ Հրեշտակի տեսիլքից սարսափահար են լինում գերեզմանը հսկող զինուորները։ Իւղաբեր կանայք հրեշտակի կամքով աւետիսը հաղորդում են առաքեալներին։ Վերջիններիս երեւում է յարութիւն առած Քրիստոսը, որն այնուհետեւ համբարձւում է երկինք։ Յարութեան նիւթից բխող գաղափարը հետեւեալն է. Քրիստոսն իր մահով յաղթում է մահին («մահուամբըն ըզմահ խափանեաց»), *կործանում է դժոխքը, առաջին մեղքի պատճառով մահացածներին կենդանացնում է եւ անմահութիւն շնորհում մարդկութեանը։ Այսինքն՝ կատարւում է աշխարհի երկրորդ արարչագործութիւնը։*

Նշուած նիւթն ու գաղափարը բազում ձեւերով շարադրուած են Խորենացու Յարութեան Հարցներում՝ վերածուելով սրտառուչ երգ-երաժշտութեան։

Ինչպէս Քրիստոսի Ծննդեան կարգերը, այնպէս էլ Յարութեանը ճօնուած այս ութամաս շարքերը, ընդհանուր առմամբ, համակուած են ցնծագին տրամադրութեամբ։ Կամովին մեծ տառապանքների ու մահուան գնացած Տէրը յարութիւն է առել եւ դրանով անմահութիւն պարգեւել մահկանացու մարդկանց.

Այսօր ցընծան մանկունք առագաստի,
քանզի Քրիստոս յարուցեալ՝ փարատեաց ըզսուգ
եւ ըզտըրտմութիւն
եւ լուսաւորեաց զաշխարհիս...

Այսօր ցընծայ Երուսաղէմըն Վերին,
այսօր ցընծայ Սիոն Մայր եկեղեցի,
քանզի Փըրկիչըն մեր յարեաւ եւ աւերեաց զդժոխսս,
եւ մեզ վերըստին Լոյսըն ծագեալ ի Հօրէ (*էջ* 419)։

Ինչպէս տեսնում ենք, համընդհանուր ցնծութիւնն այս անգամ էլ ողողուած է ոգեղէն լոյսով, քանզի Լոյս-Աստուած իր Յարութեամբ վերացնում է նախահայր Ադամի մեղքը, նորոգում է հին մարդկութիւնը, որի առջեւ բացում է անմահութեան դուռը։ Օրհներգուն հակադրել է մահաբեր իմացութեան ծառը եւ կենարար խաչափայտը.

Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն,
իսկ Յարութեամբ Միածնիդ ըզգեցաք զանմահութիւն.
փա՛ռք Յարութեան Քո, Տէ՜ր:

Խաբանօք փայտին ճաշակեցաք ըզմահ,
իսկ փայտէն կենաց նորոգեցաք ամենայն.
փա՛ռք Յարութեան Քո, Տէ՜ր (*էջ* 326)։

Յարութեան նիւթը եւ գաղափարն արծարծելիս, օրհներգուն այս անգամ եւս թէ՛ ներբողական-փառաբանական խօսքեր է ասել եւ թէ՛ հեղել իր ապաշխարական զեղումները, երբեմն՝ անձնական մակարդակով եւ յաճախ՝ բանաստեղծական ջերմ շնչով։ Ահա երկու հատուած Ողորմեաներից,

որոնք արտայայտում են նաեւ մարդու ազատութեան ու անմահութեան տենչերը.

Որ տրրտմահաղորդ Քո չարչարանօք խաչին
ազատեցեր զմարդն ի տրրտմազգեաց փայտէն
եւ ի մեղսաճաշակ պըտղոյն,
Քրիստո՜ս Աստուած, եւ մե՛զ ողորմեա... (էջ 389):

Ի խաչին բեւեռեցար, Աստուա՜ծ,
եւ զմարդն ի կապանաց մահու արձակեցեր.
եւ զիս մի՛ անտես առներ,
որ մեղօքս եմ մեռեալ (էջ 350):

Մաշտոցի հետեւութեամբ, որ հեղինակել է Յարութեան համար սահմանուած քառասնօրեայ Պահքի ութաշարք Հարցներ, Խորենացին ստեղծել է Յարութեանը նուիրուած համանման շարքեր, որոնք նախատեսուել են երգուելու մինչեւ Հոգեգալուստն ընկած յիսնօրեակում (Յինանց օրերին)։

Յարութեանը նուիրուած Մեծացուցէների շարքի երգերին մենք որոշ չափով անդրադարձանք Խորենացու մարիամերգութիւնը դիտարկելիս։ Աւելացնենք այստեղ, որ այդ շարքը եւս գրուած է ըստ ութ ձայնեղանակների։ Սակայն, ըստ այդմ ստեղծուած երգերի քանակը հաւասարաչափ չէ, ինչը թերեւս յետագայ միջամտութիւնների արդիւնք է։ Ասենք նաեւ, որ շարքում առկայ է մի Մեծացուցէ, որը հեղինակը, աւանդոյթից շեղուելով, նուիրել է ոչ թէ Աստուածամօրը, այլ Աստուածորդուն։ Այդ օրհներգը բաւական գեղեցիկ քերթուած է՝

Մեծացուցանեմք ըզՔեզ,
որ ի Հօրէ Բանդ եւ անճառելի Ծընունդ,
որ ի Կուսէն մարմնացար, ցուցար մեզ:

Մեծացուցանեմք ըզՔեզ,
որ կոխեցեր ըզմահ աստուածապէս
եւ լուծեր ըզկընիք մահու,
որ ի խաչին բարձրացար կամաւ Հօր:

Մեծացուցանեմք ըզՔեզ,
որ թաղեցար ի նոր գերեզմանի
եւ յերրորդ աւուր յարեար,
որ ի յերկինս համբարձար փառօք Հօր (էջ 64-65)։

*

Խորենացին հեղինակել է նաեւ Հոգեգալստեան, Վարդավառի եւ Աստուածածնի Վերափոխման առաջին օրերի կարգերը։ Այդ տօները Ե. դարում նշուել են առանց օրերի ստորաբաժանման, ինչը կատարուել է աւելի ուշ՝ Ներսէս Շնորհալի կաթողիկոսի սահմանած կարգով։ Վերջինս էլ հենց հեղինակել է այդ տօների յաջորդ օրերին նուիրուած օրհներգերը։

Հոգեգալուստը հայ առաքելական եկեղեցին նշում է Յարութիւնից յիսուն օր անց։ Այդ ժամանակ, ըստ Նոր Կտակարանի, Սուրբ Հոգին Վերնատանն է իջել առաքեալների վրայ եւ նրանց տուել քրիստոնէութիւնն աշխարհով մէկ քարոզելու մարգարէական շնորհը (Գործք Առաքելոց, Բ., 1-36)։ *Այս նիւթը բանաստեղծօրէն մշակել է Խորենացին։ Նա Սուրբ Հոգուն ներկայացրել է* «աննիւթական Աղաւնի» *փոխաբերութեամբ, որի շնորհիւ*

առաքեալքն արբեցան անմահական բաժակալըն
եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս (*էջ* 428)։

Տօնական ցնծագին տրամադրութեամբ է համակուած ողջ կարգը։ Այս կարգի Մեծացուսցէն նոյնպէս, աւանդոյթից չեղուելով, օրհներգում է ոչ թէ Աստուածածնին, այլ Սուրբ Հոգուն։ Սա միանգամայն հասկանալի է. քանի որ կարգի բոլոր երգերը վերաբերում են Ս. Հոգու գալստեանը, ուստի թեմայից անհարկի չեղում կը լինէր, եթէ երգերից մէկը ձօնուէր Տիրամօրը։ Ահա այդ Մեծացուսցէն, որը թերեւս, կարգի ամենագեղեցիկ երգն է.

Այսօր, նո՜ր ժողովուրդք,
ցընծացէ՛ք ընդ գալուստ Հոգւոյն Սրբոյ՝
մեծացուցանելով զԵլոհն ի Հօրէ:

Այսօր ցընծան առաքեալքըն՝
զարդարեալք ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ՝
մեծացուցանելով զԵլոհն ի Հօրէ:

Այսօր զուարճացան արարածք
ճըշմարիտ գալըստեամբ Հոգւոյն Սրբոյ՝
մեծացուցանելով զԵլոհն ի Հօրէ (*էջ* 430-431)։

Վարդավառի կամ Քրիստոսի Այլակերպութեան տօնը հայ առաքելական եկեղեցին նշում է Յարութիւնից 98 *օր անց, որ համընկնում է Հոգեգալստեանը յաջորդող եօթերորդ Կիրակիին։ Դա այն օրն է, երբ, ըստ Աւետարանի (Մատթէոս, ԺԵ.*, 1-13) *Քրիստոսը մի բարձր լեռան վրայ, որ աւանդաբար համարւում է Գալիլիայի Թաբոր լեռը, իր երեք աշակերտների՝ Պետրոսի, Յակոբի եւ Յովհաննէսի առջեւ այլակերպուել է (կերպարանափոխուել)։ Նրա դէմքը փայլել է արեւի նման, եւ նրա զգեստները դարձել են սպիտակ, ինչպէս լոյսը։ Ապա իջել է մի լուսեղէն ամպ, որտեղից հնչել է Հայր Աստծոյ ձայնը.* «Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ, դմա՛ լուարուք»։

Այս հրաշքի առթիւ հայ եկեղեցու սահմանած տօնի խորհուրդը քննել է Խորենացին «Յաղագս Վարդավառի Խորհրդոյ» մեկնաբանական երկում[39]։ *Ի դէպ, նա այստեղ Այլակերպութիւնը կոչել է նաեւ Պայծառակերպութիւն*[40], *որ ընդունուել է մեր եկեղեցու եզրաբանութեան մէջ։*

Խորենացին Վարդավառի տօնի առթիւ ստեղծել է նաեւ օրհներգերի առանձին կարգ, որն ըստ ամենայնի հոգեհարազատ է նրա վերոյիշեալ երկին։ Այդ երկում հեղինակը Վարդավառի մասին ասել է, թէ «Արդարեւ սա է օր ցնծութեան եւ ուրախութեան, զոր արար Տէր. սա է օր ծագման մեծի

փառացն Աստուծոյ, որ է նոր արքայութեան սկիզբն եւ տեսչութիւն Էական լուսոյն եւ նկարագրի յուսոյն յաւիտենից»[41]։ *Ըստ այսմ, ինչպէս նախորդ՝ Հոգեգալստեան, այնպէս էլ Վարդավառի տօնի առթիւ նրա ստեղծած օրհներգերը ողողուած են ցնծութեամբ, ոգեղէն լոյսով ու յոյսով.*

Որ ըզճառագայթ փառաց Քոց ցուցեր,
արեգակնակերպ փայլմամբ զարարածըս լուսաւորեցեր,
զՔեզ փառաւորեմք, իմանալի Լո՛յս... (*էջ* 507)։

Լերինք ցընծասցեն առաջի Քո, Տէ՛ր,
որ երեւեցար ի փառս Աստուծոյ Հօր... (*էջ* 511)։

Այս կարգում էլ կայ մի Մեծացուսցէ, որը նուիրուած է Աստուածածնին եւ առնչւում է Վարդավառի տօնին։ Հեղինակն այստեղ կատարել է երկու ուշագրաւ հակադրութիւն։ Եթէ Պայծառակերպութեան ժամանակ առաքեալներն ահաբեկւում են Տիրոջ մասնաւոր (մասնակի) լոյսի ճառագայթումից, ապա Աստուածածինը կրել է իր մէջ «բովանդակ ըզհուր Աստուածութեանըն»։ *Եթէ Պայծառակերպութեան ժամանակ առաքեալներին հովանի է լինում լուսեղէն ամպը, ապա Աստուածածնին հովանաւորել են Գերագոյն Սուրբ Հոգին եւ Բարձրեալի զօրութիւնը։*

Աստուածածնին է ձօնուած նաեւ Վարդավառի կարգի Ճաշուն, որը դարձեալ սկսւում է ցնծագին աւետիսով.

Ուրախացի՛ր, Պըսակ կուսից Տիրամա՛յր,
այսօր Որդին Քո զՀայրենին փայլեաց զփառըս.
Ներմա յաւերժ յա՛ճձն արա զանճինըս մեր (*էջ* 512)։

Զլինէին Վարդավառին ձօնուած խորենացիական օրհներգերը, թերեւս չէր ծնուի Նարեկացու չէնչող «Տաղ Վարդավառի»ն։

Վարդավառից յետոյ 5րդ Կիրակի օրը մեր եկեղեցին նշում է Աստուածածնի Վերափոխման տօնը։ Տիրամօր՝ հոգով ու մարմնով երկինք վերափոխուելու պատմութիւնը «ունիմք ի գրուածոց ինչ Դիոնեսիոսի Արիսպագացւոյ առ Տիտոս, այլեւ Նիկոդեմոսի»[42]։ *Վերափոխմանն անդրադարձել է նաեւ Խորենացին իր վերոյիշեալ Թուղթում։ Բացի այդ, նա հեղինակել է նաեւ Վերափոխմանը նուիրուած օրհներգերի նախնական կարգը։*

Ինչպէս Աստուածորդու Յարութիւնը, այնպէս էլ Աստուածամօր Վերափոխումը, որ նոյնպէս յարութիւն է մահից երեք օր անց, ցնծութեամբ են ընդունել երկրայինները եւ երկնայինները։ Ուստի եւ այս տօնն էլ ուրախառիթ է եւ ցնծագին.

Տօնելով ըզյիշատակ Կուսի՝ Աստուածորդւոյ Մօր,
հրրճուին հրեշտակք ի յերկինս,
եւ ցընծան դասք առաքելոց եւ մարգարէից
ընդ կուսական տօնըս.
ողորմեա՛ մեզ, Աստուա՛ծ (*էջ* 529)։

Ըստ Վերափոխման պատմութեան, Քրիստոսը «բազմութեամբ երկնային զօրաց» *իջնում եւ մասնակցում է Մօր յուղարկաւորութեանը, ապա*

քերովբէական կառքով տեղափոխում է նրան երկինք։ Զափազանց գեղեցիկ են կարգի Տէր Յերկնիցի հետեւեալ տողերը.

Մարգարտատեսիլ եւ ծիրանազգեաց հրաշափառագոյն
Կո՜յս,
զոր առեալ Որդւոյ, վերափոխեալ՝ դասեաց յանպատում ի
կեանս... (*էջ* 530)։

*

Խորենացին օրհներգեր է հեղինակել ոչ միայն եկեղեցական խոշոր տօների առթիւ, այլեւ առանձնակի օրհներգել է որոշ նշանաւոր սրբերի, որոնք Ե. դարում արդէն տօնելի են եղել հայ առաքելական եկեղեցում։ Բնականաբար, նա անդրադարձել է Յովհաննէս Մկրտիչ Սուրբ Կարապետին՝ օրհներգերի մի շարք նուիրելով նրա նահատակութեան յիշատակին։ Հայ եկեղեցին այդ տօնը նշում է Յարութեան եօթերորդ օրը։

Օրհներգուն բանաստեղծօրէն շարադրել է Յովհաննէս Մկրտչի գլխատման աւետարանական պատմութիւնը (Մատթէոս, ԺԴ., 1-12, *Մարկոս, Զ.*, 14-29)։ *Յովհաննէս Մկրտչի նահատակութեան պատմութեանը Խորենացին անդրադարձել է նաեւ իր Պատմութիւն Հայոցում, որտեղ մի աւանդութեան հիման վրայ տեղեկացրել է, թէ Յովհաննէս Մկրտչի վրէժը լուծելու համար Հերովդէսի դէմ մղուած պատերազմին մասնակցել են նաեւ հայոց քաջերը*[43]։

Յովհաննէս Մկրտիչը Խորենացու օրհներգերում ներկայացուած է իբրեւ «առաւել քան զմարգարէս», *քանի որ ոչ միայն կանխագուշակել է Քրիստոս-Մեսիայի գալուստը, այլեւ մկրտել է նրան եւ հարթել նրա ճանապարհը.*

Ճշմարիտ մարգարէ եւ ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ,
յառաջընթաց Կարապետ եւ պատմող աստուածային օրինացըն
հորդէր ճանապարհիս Թագաւորին յաւիտենից (*էջ* 334-335)։

Ինչպէս Մարիամ Աստուածածինը, այնպէս էլ այս եւ միւս սրբերն ընկալուել են իբրեւ միջնորդ եւ բարեխօս՝ Աստծոյ եւ մարդու միջեւ։ Ուստի եւ, դիմելով Յովհաննէս Մկրտչին, Խորենացին հայցում է.

Որք հաւատով ըզյիշատակըս քո տօնեմք
եւ անդադար ձայնիւ զքեզ ունիմք բարեխօս.
աղաչեա՛ զԱստուած հարցըն մերոց (*էջ* 333)։

Բոլոր հին քրիստոնէական եկեղեցիները իրենց տօնելի սրբերի շարքին են դասել նաեւ եգիպտական միայնակեաց Անտոն Անապատականին (Թեբայեցի, 251-356)։ *Աթանաս Աղեքսանդրացին գրել է նրա վարքը, որն արդէն Ե. դարում յունարէնից թարգմանուել է հայերէն*[44]։ *Ճգնաւորութեան հիմնադիր համարուած այս համաքրիստոնէական սրբին Խորենացին, անշուշտ, չէր կարող անտեսել եւ նրա տօնին նուիրել է օրհներգերի մի շարք։*

Ներբողելով ու փառաբանելով Անտոն Անապատականին, օրհներգուն նրան նմանեցրել է Եղիա Մարգարէին ու Յովհաննէս Մկրտչին եւ ներկայացրել այսպիսի գեղեցիկ բնութագրումներով. «անմարմնական վարք պայծառացեալ ի մարմնի», «դուռըն մըտից կենաց ճանապարհին»,

«պարծանք եկեղեցւոյ եւ ուրախութիւն հրեշտակաց», «բաժակ հոգեւորական՝ լցցեալ աստուածային ուրախութեամբ»...

Ինչպէս սրբախօսական երկերում, այնպէս էլ սրբերին նուիրուած օրհներգերում, պաշտուող սուրբը հանդէս է բերւում գերմարդկային, գերբնական յատկանիշներով։ Այդպիսին է նաեւ Խորենացու օրհներգած Անտոն Անապատականը.

Որ գերազանցեալ գըտար առաւել քան ըզբընութիւն
մարդկան... (*էջ* 82)
աղօթանուէր թեւօքըն հալածեաց ըզբազմութիւն լեգէոն
զօրացըն... (*էջ* 83)

Այս կարգում էլ ներբողանքին ու փառաբանութեանը զուգակցուած է օրհներգուի աղերսանքը, որով նա դիմել է Աստծոյ եւ մարդու միջնորդ ու բարեխօս սրբին։

Ե. դարից ի վեր հայ առաքելական եկեղեցին նշում է նաեւ համաքրիստոնէական մէկ այլ սրբի՝ Թէոդոս Թագաւորի տօնը։ Խօսքը Բիւզանդիայի կայսր Թէոդոսիոս Մեծի մասին է, որը գահակալել է 379-395*ին եւ եղել է ոչ միայն հմուտ զօրավար, այլեւ ջերմեռանդ քրիստոնեայ։* «Նա իր մեծ եւ հեղինակաւոր ուժով, իր կայսերական հրամաններով վերահաստատեց եկեղեցու մէջ այն դաւանաբանութիւնը, որ կոչւում էր ուղղափառ (օրթոդոքս) եւ ձեւակերպուած էր Նիկիայի տիեզերական ժողովի մէջ... Թէ որքան բարձր էր գնահատւում Թէոդոսի եկեղեցական գործունէութիւնը, երեւում է նրանից, որ եկեղեցին, ինչպէս նաեւ հայոցը (նկատի ունի հայոց եկեղեցին – Հ.Բ.), սուրբերի դասը կարգեց նրան»[45]։

Ինչպէս տեղեկացնում է Աւետիքեանը, Թէոդոս Թագաւորի կեանքի ու գործի մասին «գոյ տեսանել կարգաւ ի նորատիպ Վարս Սրբոց. հատ. Ա-պայից. (երես 103), ուր եւ արձանականն Սրբոյ Ամբրոսիոսի յերջանիկ փոխումն նորա ի դասս սրբոց»[46]։

Խորենացին, անշուշտ, չէր կարող անտեսել նաեւ այս մեծագործ սրբին, ուստի նրան եւս ձօնել է օրհներգերի մի առանձին շարք։ Իր Պատմութիւն Հայոցի մէջ էլ Քերթողահայրն անդրադարձել է Թէոդոսին, որ «քակեաց զմեհեանս կռոցն մինչեւ յատակս եւ արար եկեղեցի»[47]։ *Թէոդոսի այս արժանիքներն են գնահատուած նաեւ օրհներգերում.*

Որ հաւատով պարտեաց ըզթըշնամին
եւ աղօթիւք հիմնեցոյց սուրբ զեկեղեցի...

Որ բարեպաշտութեամբ հիմնեցոյց զեկեղեցի սուրբ
եւ կարգաւորեաց ուղղափառութեամբ... (*էջ* 88)։

Յատկանշական է, որ կարգի Օրհնութեան մէջ, ի դէմս Թէոդոսի, Խորենացին օրհներգել է բոլոր այն Թագաւորներին, որոնք իրենց բարեպաշտութեամբ ու զօրութեամբ հաստատուն են պահել քրիստոնէական եկեղեցին։ Այդ «սուրբ Թագաւորաց» մէջ Խորենացին, անշուշտ, նկատի է ունեցել նաեւ Տրդատ Մեծին, որի դերը հայոց դարձի մէջ չափազանց բարձր է գնահատել նա իր Պատմութիւն Հայոցում։ Թէոդոսի կամ Թագաւորաց կարգի

մէջ նախապէս հաւանաբար ընդգրկուած է եղել Տրդատ թագաւորին ձօնուած Խորենացու «Ի վերին ի յօգնականութենէն» սկսուածքով երգը, որ, ըստ մեզ, պարականոն է դարձել, քանի որ հայոց արքան դեռեւս սրբացուած չի եղել այդ ժամանակ[48]*։ Այդ երգը յետագայում որպէս մեղեդի (ինչպէս Սահակ Պարթեւին վերագրուած Ծննդեան երգը) ընդգրկուել է որոշ Գանձարանների մէջ։ Բերենք մի տուն այդ երգից.*

Ըստ Եզեկիային, քեզ տիւրն դարձեալ ի վերջըս տացի նըշան՝
երկարելով զժամանակըն,
եւ ըստ քաջին Յեսուայ, արեգակն ի քեզ առկայասցի՝
մինչեւ ի վախճան պահանջեցեալ զվրէժս ի Հագարայ եւ ի Քանանացւոյն
եւ զանվախճան զխաղաղութիւն Աշխարհիս Հայոց՝
ըզՀիւսիսցիս[49]։

Այսպիսով, հայ քերթուածեան մէջ առաջին անգամ հնչում է Հայոց Աշխարհ անունը, եւ յիշւում է հայ ժողովուրդը որպէս հիւսիսցիներ կամ հիւսիսականներ։ Հայաստանը հիւսիսային երկիր էր Միջագետքի համեմատ եւ, ըստ Աստուածաշունչի, գտնւում էր «ի ծագաց հիւսիսոյ» (*Յեզեկիել, ԼԸ.*, 6)։ *Խորենացին հայ ժողովրդին իր Պատմութիւն Հայոցի մէջ համարել է վեհագոյնը բոլոր հիւսիսային ազգերի մէջ։ Վերը բերուած հատուածին համահունչ է Պատմութիւն Հայոցի հետեւեալ տողը.* «Մեծաւ պնդութեամբ առնէր վրէժխնդրութիւն հաւատոց եւ վարուց երանելին Տրդատ»[50]։

Եթէ Խորենացու ժամանակ Տրդատ թագաւորը դեռեւս հայ եկեղեցու տօնելի սրբերի շարքում չի եղել, ապա Գրիգոր Լուսաւորիչը, ընականաբար, ի սկզբանէ սրբացուել է, ըստ որում ոչ միայն հայ, այլեւ օտար եկեղեցիների կողմից։ Լուսաւորչին նուիրուած տօներից մէկը վերաբերում է նրա վիրապից ելքին։ Այդ տօնի առթիւ Խորենացին ստեղծել է օրհներգերի մի շարք։

Խորենացու օրհներգերը խարսխուած են Լուսաւորչի վարքի վրայ, որի հիմնական աղբիւրն է Ագաթանգեղոսի Պատմութիւնը։ Խորենացին քաջածանօթ է եղել այդ երկին, որի հիման վրայ իր Պատմութիւն Հայոցում ներկայացրել է Լուսաւորչի կեանքը եւ գործը։ Պատմահօր ընորոշմամբ, առաջին հայ քահանայապետը լուսաւորեց «զամենայն Հայս լուսով աստուածգիտութեան» *եւ ջնջեց* «զխաւար կռապաշտութեանն»[51]։ *Իր օրհներգերում էլ Քերթողահայրն ասել է.*

Որ Քրիստոսանուէր կոչմամբըն ծագեցար որպէս զարեգակըն
եւ լուսաւորեցեր ըզՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ,

տէ՛ր Սուրբ Գրիգոր, անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց...

Որ նորին սուրբ աղօթիւք բարձեր զխաւար կռապաշտութեան
ի Հայաստան աշխարհէ
եւ արարեր երկրրպագուս Ամենասուրբ Երրորդութեանըդ...

հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ ի Հայաստան երկրի...
(էջ 472-473)։

Այս օրհներգի մէջ էլ առաջին անգամ հնչում է Հայաստան անունը, արծարծւում է «հայկական թեման», փառաբանւում է ազգային սուրբը։ Այստեղ օրհներգուն Քրիստոսին կամ Սրբին դիմում է ոչ միայն առհասարակ հաւատացեալ մարդու կամ մարդկութեան, այլեւ որոշակիօրէն հայ մարդու, դարձի եկած հայ ժողովրդի անունից։ Բանաստեղծն առաւել ջերմ խանդաղատանքով, յոյսով ու հաւատով է ապաւինում իր ժողովրդի առաջնորդ հայրապետին, հոգեւոր հովուին.

Ըզքեզ ունիմք բարեխօս առ Յիսուս Միածինըն,
եւ աղաչող վասըն քո ուխտաւորացըս:

Կանխեա՛, խընդրեա՛ զթողութիւն յանցանաց ի քէն
աշակերտելոցըս...

Որ համբերութեամբըդ քո ստացար քեզ ժողովուրդ սեպհականըս
եւ ընտրեալըս...
վասըն ժողովրդեան քո հայցեա՛ ի Տեառնէ ըզքաւութիւն
(էջ 471-476)։

Եթէ մաշտոցեան որոշ օրհներգերում հայրենասիրական ոգին թաքնուած է խօսքի ենթաշերտերում, ապա այստեղ արդէն այն առաւել բացորոշ է։ Հեղինակը տենչում է փրկութիւնն իր «ընտրեալ ժողովրդի», որի նկատմամբ ունեցած իր անսահման սէրը յետագայում պիտի առատօրէն հեղէր իր անմահ Պատմութիւն Հայոցի մէջ։

Անհրաժեշտ է նշել, որ Խորենացուն վերագրուած է նաեւ Գրիգոր Լուսաւորչին նուիրուած «Ով արքայակերպ» սկսուածքով երգը, որը (Տրդատ թագաւորին ձօնուած երգի հետ միասին) թերեւս պարականոն դառնալով՝ յետագայում, որպէս մեղեդի, ընդգրկուել է որոշ Գանձարաններում[52]։

Ըստ Ալիշանի, այս երգի «...խազերն ալ կը ցուցընեն, թէ շատ վարպետ եւ անոյշ եղանակ պիտի ունենայ, շէնքն ալ նման է այն հին մեղեդեաց, որոնց ոճն յայտնապէս կը ցուցընեն, թէ Թարգմանչաց դարէն նոր չեն»[53]։

Այս, ինչպէս նաեւ Խորենացու՝ Տրդատ արքային ձօնուած երգը, Թահմիզեանի կարծիքով՝ «որպէս մեղեդիներ են մտայղացուած եղել սկզբից եւեթ»[54]։ *Սա մեզ համար ընդունելի չէ, քանի որ մեղեդին (եւ տաղը), իբրեւ գանձ երգատեսակի բաղկացուցիչ մաս, աւելի ուշ շրջանի երեւոյթ է։*

*

Խորենացու օրհներգերը «ակներեւաբար յղացուած են նրա մեծ ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի ստեղծագործական աւանդոյթների իւրացման նշանաբանի ներքոյ»[55]։ *Խորենացին եւս յօրինել է հիմնականում երեք, երբեմն չորս տուն կազմող ազատ ոտանաւորով օրհներգեր*[56]։ *Նա եւս ձգտել է գրել հանրութեանը մատչելի լեզուով, քանի որ իր խօսքն ուղղել է լայն լսարանի։ Սակայն լինելով աւանդոյթի լաւագոյն շարունակող ու զարգացնող, նա աւելի շատ է կատարել բառաբարդումներ*

եւ դիմել առաւել բազմազան արտայայտչամիջոցների, դրսեւորելով իւրայատուկ «վսեմական ոճ»[57]։ *Նրա երգերի* «մեծ մասը լեզուով, կառուցուածքով եւ նախնական գեղեցկութեամբ աչքի ընկնող ընդհանուր ձեւով, ներկայացնում է հայ հոգեւոր բանաստեղծութեան հնագոյն շերտերից մէկը»[58]։

Քերթողահայրը զարգացրել է հայ օրհներգութեան թէ՛ բանարուեստը եւ թէ՛ բովանդակութիւնը։ Նա Քրիստոսի Ծնունդի, Յարութեան, Հոգեգալստեան, Վարդավառի առաջին օրհներգուն է հայոց մէջ։ Նա է սկզբնաւորել նաեւ հայ մարիամերգութիւնը։

Սուրբ Կոյսից զատ, նա նաեւ առաջինն է բանաստեղծօրէն պանծացրել որոշ նշանաւոր սրբերի, այդ թւում նաեւ ազգային սուրբ Գրիգոր Լուսաւորչին՝ ստեղծելով առաջին հայ վարքագրական օրհներգերը։

Ըստ ամենայնի փառաբանելով Քրիստոսին, Խորենացին լաւագոյնս շարունակել է մեծ ուսուցչապետերի օրհներգերից բխող լուսերգութիւնը, արտայայտել է իր՝ պաշտող-օրհներգողի խոհերն ու յոյզերը, հայրենասիրական զգացումները, հայ եկեղեցու գաղափարաբանութիւնը։

Խորենացու երգերը ներկայացնում են Ե. դարի «հայ հոգեւոր երգաստեղծութեան բարձրագոյն նուաճումները»։ *Դրանց որոշ նմուշներ, որոնք* «կրում են իրենց մեծ հեղինակի անհատական վառ կնիքը եւս, գոյացնում են 5րդ դարի հայ հոգեւոր երգաստեղծութեան պայծառ գագաթը»[59]։ *Ըստ այսմ, Խորենացին մեծապէս նախապատրաստել է յետագայ հայ քերթութիւնը, յատկապէս Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնը։*

Իր թողած հարուստ բանաստեղծական ժառանգութեամբ Պատմահայրը յիրաւի վեհ Քերթող է, ինչպէս ասել է մեր միջնադարեան գրիչներից մէկը, եւ Քերթողահայր է, ինչպէս ասել են հնուց ի վեր եւ ասում ենք մենք։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ*, Վաղարշապատ, 1903, էջ 477-503. նաեւ՝ *Յակոբոս Տաշեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա*, Վիեննա, 1895, էջ 516, 689. նաեւ՝ Նիկողոս Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին եւ Հայ Երաժշտութիւնը V-XV դդ.*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1985, էջ 22։

[2] *Շարակնոցային ցանկերում Արեւագալի բոլոր երգերի հեղինակ է ներկայացուած Ներսէս Շնորհալին (Շարական Հոգեւոր Երգոց*, Կ. Պոլիս, 1853, էջ Գ. նաեւ՝ *Յակոբ Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, Հտր. Ա.*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1959, էջ LXVI-LXVIII)։

[3] *Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. 2*, Կ.Պոլիս, 1846, էջ 919։

[4] *Նոյն։ Ճիշտ չէ այն բացատրութիւնը, թէ Քերթողահայր պատուանունը հիմնուած է Պատմութիւն Հայոց աշխատութեան վրայ։ Առաւել անընդունելի են Պատմահօրը եւ Քերթողահօրը առանձին անձինք ներկայացնելու փորձերը։*

[5] *Ղեւոնդ Ալիշան*, «*Քնար Հայկական, Է. Մովսէս Քերթողահայր Հայոց*», *Բազմավէպ*, Վենետիկ, 1849, էջ 51։

[6] *Նիկողոս Թահմիզեան*, «*Մովսէս Խորենացին եւ Հայ Հին Ու Վաղ Միջնադարեան Երգարուեստը*», *Էջմիածին*, 1979, Ե, էջ 26։

[7] *Շարական*, էջ Ա.։ *Շարականների հեղինակների ցանկերը եւ նրանց վերաբերող միջնադարեան այլ բնագրեր հրատարակել է Անասեանը* (*Հայկական Մատենագիտութիւն, Հար. Ա.*, էջ LXV-LXVII)։ *Խորենացու օրհներգերից առաջ հայ առաքելական եկեղեցին օգտագործել* (*եւ օգտագործում*) *է այդ տօների համար ստեղծուած հնագոյն ժամերգերը* (*Ժամագիրք*, էջ 327-328, 372-373)։

[8] *Սահակ Վրդ. Ամատունի, Հին Եւ Նոր Պարականոն կամ Անվաւեր Շարականներ, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*, 1911, էջ 8։ *Ամատունին այստեղ անվերապահօրէն ընդունել է, որ* «Մովսէսն է գրել Ծննդեան կարգը»։

[9] *Վարդան Վարդապետ, Տեսութիւն Անթառամ Ծաղիկ Մեծացուցչին, Երուսաղէմ*, 1834, էջ 6։ *Նշենք, որ Վարդան Վարդապետի քննած Մեծացուցչէն Խորենացու լեզուից եւ ոճից զգալիօրէն չեղուող երգերից է, ուստի եւ, անկասկած, յետսամուտ է*։

[10] *Ծննդեան որոշ կարգերում յետագայում ընդգրկուել են նաեւ այնպիսի երգեր, որոնք դարձել են պարականոն* (*Ամատունի*, էջ 4, 8-10)։ *Ի դէպ, Շարակնոցում եղել է նաեւ Ծննդեան ուխտերորդ օրուան նուիրուած առանձին կանոն* («*Կանոն Տնօրէնութեան Եւ անուանադրութեան Տեառն*»), *որը հեղինակել է Գրիգոր Անաւարգեցին* («*Կանոն Տնօրէնութեան Եւ Անուանդրութեան Տեառն*», *Բազմավէպ, Վենետիկ Հար. ԾԲ.*, *Ցունուար* 1894, էջ 10-11. *նաեւ՝ Ամատունի*, էջ 4-7)։ *Ըստ Ալիշանի, Անաւարգեցին շարականներ է գրել նաեւ Քրիստոսի Յայտնութեան եւ Մկրտութեան ճրագալուցի, ինչպէս նաեւ Ծննդեան եւ Յայտնութեան առաջին երեք օրերի առթիւ* (*Ալիշան, Մխառան, Վենետիկ, Ս. Ղազար*, 1885, էջ 242)։

[11] *Նիկողոս Թահմիզեան, Ներսէս Շնորհալին երգահան Եւ Երաժիշտ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ*, 1973, էջ 19։ *Ընդունելի չեն Խորենացու երգերի վերաբերեալ Գ. Յակոբեանի կատարած հաշուարկներն ու վերագրումները* (*Գրիգոր Յակոբեան, Շարականների Ժանրը Հայ Միջնադարեան Գրականութեան Մէջ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ*, 1980, էջ 88)։

[12] *Ամատունի*, էջ 3։ *Խորենացու ստեղծած Աւետեաց կարգի հաստատումից առաջ հայ առաքելական եկեղեցին օգտագործել* (*եւ օգտագործում*) *է այդ* (*նաեւ Աստուածածնի ծննդեան*) *տօնի համար մի հնագոյն ժամերգ* (*Ժամագիրք*, էջ 369)։

[13] *Գ. Յակոբեանը, ծանօթ լինելով հանդերձ Ամատունու աշխատութեանը, Խորենացուն է վերագրել Գրիգոր Վկայասէրի հեղինակած Աւետեաց կարգի, ինչպէս նաեւ Աստուածածնի ծննդեան կարգի Յակոբ Կլայեցու հեղինակած շարականները* (*Յակոբեան*, էջ 88-89)։

[14] *Շարական*, էջ Ա.։ *Ըստ Հայր Գաբրիէլ Աւետիքեանի*, «Զկարգ շարականաց Յարութեան ըստ ութ ձայնից բազումք (*ընդգծումն իմն է - Հ.Բ.*) ընծայեն Մովսէսի Խորենացւոյ» (*Գաբրիէլ Վրդ. Աւետիքեան, Բացատրութիւն Շարականաց, Վենետիկ, Ս. Ղազար, ՌՄԿԳ* - 1814, էջ 284)։

[15] *Ամատունի*, էջ 100։ *Թահմիզեանը եւս Շիրակացուն է վերագրել Յարութեան Հարցների մեծ մասը՝ ընդունելով հանդերձ, որ Խորենացին հեղինակել է «Յարութեան երգեր»* (*Թահմիզեան, Ներսէս Շնորհալին*, էջ 19. *նաեւ նոյն, Գրիգոր Նարեկացին Եւ Հայ Երաժշտութիւնը*, էջ 163 եւն.)։ *Յարութեան Հարցների մէջ եւս եղել են երգեր, որոնք դարձել են պարականոն* (*Ամատունի*, էջ 101-102)։

[16] *Թահմիզեանի ենթադրութեամբ, Յարութեան Հարցների ուխտերորդ շարքի «Փառք Քրիստոսի ամենազօր Յարութեանն» սկսուածքով Տէր Յերկնից հեղինակել է Գրիգոր Նարեկացին* (*Թահմիզեան, Գրիգոր Նարեկացին*, էջ 82-88։ *Այս կապակցութեամբ աւելի մանրամասն տե՛ս՝ Գրիգոր Փիտէճեան, Գրիգոր Նարեկացի Շարականագի՞ր, Էջմիածին*, 1999)։

[17] *Շարական*, էջ Ա.. նաեւ՝ *Ամատունի*, էջ 8։ *Թահմիզեանը հաւանական է համարել, որ Ցարուիթեան Մեծացուսցէների հիմնական մասը հեղինակել է Բարսեղ Ճոնը* (*Թահմիզեան, Ներսէս Շնորհալին*, էջ 19. նաեւ՝ *Թահմիզեան*, «*Բարսեղ Ճոնը Եւ Մասնագիտացուած Երգաստեղծուիթեան Մաղկումը Հայաստանում* VII *Դարում*», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1973, *թիւ* 1, էջ 211-217)։ *Պահպանուել են նաեւ Ցարուիթեան մի շարք պարականոն Մեծացուսցէներ, որոնց մեծ մասն անանուն է* (*Ամատունի*, էջ 11-17)։ *Մինչեւ Խորենացու՝ Ցարուիթեանը նուիրուած օրհներգերի ստեղծումը հայ եկեղեցին օգտագործել* (*եւ օգտագործում*) *է այդ մեծ տօնին նուիրուած հնագոյն ժամերգերը* (*Ժամագիրք*, էջ 325, 359-361)։

[18] *Նշուած տօների յաջորդ օրերի կարգերը հեղինակել է Ներսէս Շնորհալին։ Իսկ մինչեւ Խորենացու համապատասխան օրհներգերի ստեղծումը հայ եկեղեցին այդ տօների համար օգտագործել* (*եւ օգտագործում*) *է հնագոյն ժամերգերը* (*Ժամագիրք*, էջ 325-326, 368)։

[19] *Շարական*, էջ Ա։

[20] *Ամատունի*, էջ 105, 117-118։

[21] *Ըստ Թահմիզեանի, Խորենացին է հեղինակել Աստուածածնի Վերափոխման առաջին օրուայ բոլոր երգերը, իսկ Վարդավառի եւ Հոգեգալստեան առաջին օրերի երգերը նա վերագրել է Անանիա Շիրակացուն* (*Թահմիզեան, Ներսէս Շնորհալին*, էջ 19. նաեւ՝ *Գրիգոր Նարեկացին*, էջ 163 եւն.)։ *Նշեցինք, որ Թահմիզեանը Ցարուիթեան Հարցների մեծ մասը եւս վերագրել է Շիրակացուն. նշուած կարգերում ընդգրկուած երգերը նա ենթարկել է երաժշտագիտական լուրջ քննուիթեան։ Սակայն հայ մասնագիտացուած երգաստեղծուիթեան մէջ Շիրակացուն ընծայուած «անփոխարինելի աւանդը» արդարացիօրէն պիտի վերագրել նշուած օրհներգերի հիմնական մասի հեղինակ Խորենացուն* (*մասամբ միայն՝ Շիրակացուն եւ միւս յաւելողներին*)։

[22] *Մովսէս Խորենացի, Մատենագրուիթիւնք, Բ. տպ., Վենետիկ, Ս. Ղազար*, 1865, էջ 281-296, 326-338։

[23] *Աւետիքեան*, էջ 289. նաեւ՝ *Թահմիզեան, Ներսէս Շնորհալին*, էջ 19։ *Խորենացուն են վերագրուել նաեւ Յովհաննէս Մկրտչի նշխարների տօնին, ինչպէս նաեւ Համօրէն Առաքելոց, Մարգարէից եւ Վարդապետաց* (*Թարգմանչաց*) *տօներին նուիրուած երգերը։ Դրանց մեծ մասի հեղինակը, սակայն, Յովհան Մանդակունին է։ Խորենացուն է վերագրուել նաեւ Հայրապետաց կարգը* (*Աւետիքեան*, էջ 568)։ *Սակայն այդ կարգի հեղինակը Ներսէս Շնորհալին է։*

[24] *Շարական*, էջ Ա.։ *Պահպանուել են Անտոն Անապատականին եւ Գրիգոր Լուսաւորչին ձօնուած պարականոն շարականներ, որոնք չեն պատկանում Խորենացու գրչին* (*Ամատունի*, էջ 18-19, 72-80)։ *Շարակնոցային ցանկերում Խորենացուն եւ Շիրակացուն են վերագրուած նաեւ Առաքելոց, Մարգարէից եւ Վարդապետաց նուիրուած օրհներգերը, որոնց հիմնական մասի հեղինակը Յովհան Մանդակունին է։*

[25] *Աւետիքեան*, էջ 110, 115, 427։

[26] *Թահմիզեան, Ներսէս Շնորհալին*, էջ 19։

[27] *Թահմիզեան*, «*Մովսէս Խորենացին*», էջ 48։ *Թահմիզեանն այս յօդուածում կատարել է Խորենացու օրհներգերի երաժշտագիտական հմուտ քննուիթիւնը։ Տե՛ս նաեւ՝ նրա «Գրիգոր Նարեկացին» ուսումնասիրուիթիւնը* (էջ 145 եւն.)։

[28] *Մի հին աւանդազրոյցի համաձայն, Խորենացին Գիւտ կաթողիկոսի մօտ երգել է Աստուածայայտնուիթեան ճրագալուցի իր յօրինած* «սքանչելի եւ հրեշտակաճուագ» «*Որ դասուց երկնաւորաց*» *Հարցնը* (*Ալիշան*, էջ 54*ի* ծան.)։

[29] *Մեսրոպ Մաշտոցին եւ Սահակ Պարթեւին վերագրուող այն կանոնիկ եւ պարականոն օրհներգերը, ուր Մարիամը յիշատակուած է իբրեւ Սրբուհի, անտարակոյս, աւելի ուշ շրջանում ստեղծուած գործեր են։*

[30] *Սրբոյն Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, *Թիֆլիս*, *Էլեքտրաշարժ տպարան Օր. Ն. Ադանեանցի*, *Հրատ. Գ. Գալստեանի*, *թիւ* 40, 1910, *էջ* 359:
[31] *Նոյն*, *էջ* 342:
[32] *Քննական բնագիրը՝ «Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի եւ Պատկերի Նորա» խորագրով, հրատարակել է Թամար Տասնապետեանը՝ Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի եւ Պատկերի Նորա». Քննական Բնագիր, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ*, 1994:
[33] *Խորենացի*, *Մատենագրութիւնք*, *էջ* 292-293:
[34] *Խորենացու մէջբերումները կատարուած են Շարակնոցի* 1853*ի Կ. Պոլսի հրատարակութիւնից. էջերը նշուած են մէջբերումների վերջում*:
[35] *Այս փոխաբերութիւնը գտնում ենք նաեւ Խորենացու վերոյիշեալ Թուղթում* (*Խորենացի*, *Մատենագրութիւնք*, *էջ* 285):
[36] *Գրիգոր Նարեկացի*, *Տաղեր եւ Գանձեր* , *աշխատասիրութեամբ Արմինէ Քէօշկէրեանի*, *Երեւան*, *Հայկ. ՍՍՀ ԳԱ*, 1981, *էջ* 124:
[37] *Աւետիքեան*, *էջ* 44:
[38] *Յակոբեան*, *էջ* 89:
[39] *Խորենացի*, *Մատենագրութիւնք*, *էջ* 326-338:
[40] *Նոյն*, *էջ* 328-329:
[41] *Նոյն*, *էջ* 329:
[42] *Աւետիքեան*, *էջ* 484: *Այս առթիւ տե՛ս նաեւ՝ Թամար Տասնապետեան*, *Մարիամ Աստուածամայր*, *Անթիլիաս*, *Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ*, 1991, *էջ* 149-152:
[43] *Խորենացի*, *Պատմութիւն Հայոց*, *էջ* 258:
[44] *Վարք Սրբոց Հարանց եւ Քաղաքավարութիւնք Նոցին. Ըստ Կրկին Թարգմանութեան Նախնեաց*, *Հտր. Ա.*, *Հրտ. Հայր Ներսէս Սարգիսեան*, *Վենետիկ*, *Ս. Ղազար*, 1855, *էջ* 17-80:
[45] *Լէօ*, *Երկերի Ժողովածու*, *Հտր. 1*, *Երեւան*, *Հայաստան Հրատ.*, 1966, *էջ* 495:
[46] *Աւետիքեան*, *էջ* 115:
[47] *Խորենացի*, *Պատմութիւն Հայոց*, *էջ* 297:
[48] *Ուշագրաւ է, որ իր Պատմութիւն Հայոցի մէջ Խորենացին Տրդատ թագաւորին մի քանի անգամ ներկայացրել է «սուրբ» մակդիրով* (*Խորենացի*, *Մատենագրութիւնք*, *էջ* 183, 187, 230):
[49] *Թահմիզեան*, *Գրիգոր Նարեկացին*, *էջ* 155, 157: *Դարեր անց Ներսէս Շնորհալին Տրդատ թագաւորին նուիրել է մի ամբողջական կանոն, որի Օրհնութիւնը եւ Մանկունքը կանոնական Շարակնոցում սկզբից եւ վերջից կցուել են Թէոդոսի կարգին, իսկ Հարցնը, Ողորմեան, Տէր Յերկնիցը եւ Ճաշուն դարձել են պարականոն* (*Ամատունի*, *էջ* 20-21):
[50] *Խորենացի*, *Մատենագրութիւնք*, *էջ* 188:
[51] *Խորենացի*, *Պատմութիւն Հայոց*, *էջ* 242:
[52] *Թահմիզեան*, *Գրիգոր Նարեկացին*, *էջ* 155-156:
[53] *Ալիշան*, *էջ* 54:
[54] *Թահմիզեան*, *Գրիգոր Նարեկացին*, *էջ* 156:
[55] *Թահմիզեան*, «*Մովսէս Խորենացին*», *Զ*, *էջ* 48:
[56] *Խորենացուն վերագրուած կարգերում առկայ բազմատուն երգերը յետագայ յաւելումներ են*:
[57] *Աւետիքեան*, *էջ* 110:
[58] *Թահմիզեան*, «*Մովսէս Խորենացին*», *էջ* 46:
[59] *Նոյն*, *էջ* 49-50:

THE HYMNOLOGY OF MOVSES KHORENATSI
(Summary)

HENRIK BAKHCHINIAN

In the 5th century, after Mesrop Mashtots and Sahak Partev, it was Movses Khoreantsi who devoted himself to hymnology. He authored almost all the hymns dedicated to significant church holidays that preceded Lent and followed Holy Week. In this way he continued and completed the work his teachers had started. Some 300 hymns, most of which he authored between the early 460s and the mid-470s, are ascribed to Khorenatsi.

Khorenatsi was the first among the Armenians to write hymns about the Virgin Mary, thus initiating Armenian songs dedicated to the Virgin Mary. In addition, he was the first Armenian to write hymns on Christ's nativity, ascension, pentecoste and transfiguration. Furthermore, he was the first who poetically highlighted several outstanding saints, including St. Gregory the Illuminator. Therefore, he was the first to author hymns on Armenian patrology (biography of siants). Furthermore, Khorenatsi completed to the best of his ability the hymns to light/luminosity/radiance that his teachers had started. His hymns bear witness of his thoughts, emotions and sensibility, patriotic feelings and the ideology of the Armenian Church.